

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԱԶԻՐԷ, Ապախ փողոց

ՄՈՒԳԱԹՅԱՐԻ ճիշտ դիմաց

Pour les annonces s'adresser  
à la Rédaction du Journal PHAROS

LE CAIRE — RUE ABDIN

vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈԹՈՒԹՅՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ

ՄԷԿ անգամի համար տողը 3 ՂՂ. ուղ.

ՄԷԿ անգամի առաջին ծանուցումներու համար  
մասնաւոր պայմաններ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ն.Կ.ՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ

Տարեկան . . . . . ՂՂ. ուղ 100

Վեցամսեայ . . . . . » 55

Եռամսեայ . . . . . » 30

ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ


Տարեկան . . . . . Ֆր. 26

Վեցամսեայ . . . . . » 14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՆՈՒՄԻՆ

ՈՒՆԻ ԴՐՈՒԹԻՒՆ՝



# ՓԱՐՈՍ

## ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՐԵՎԱՆԻ, ՀԻՆԳԵԱԲԹԻ ԵՒ ՔԱՆԿԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Տնօրէն-Խմբագիր՝ Յ. ԱԼՓԻԱՐ

### ԿԵՆՍԱԿԱՆ ՀԱՐՑ ՄԸ

( Շար. Սախորդ թիւէն և վերջ ),

Մնացած մը ևս կը կրկնենք — և եթէ հարկ ըլլայ տաճար անգամ ալ պիտի կրկնենք — թէ Գալստեան վարժարանի շէնքը նախատինք մը, ամօթ մըն է մեր ազգին համար և պէտք է որ յամառաբար կանգուն կենայ ան՝ իր յոգնած հիմերուն վրայ: Եւ ո՞վ կ'երաշխաւորէ մեզ թէ օր մը յանկարծ չպիտի փլչի այդ պառակտած շէնքը, խեղճ տղոց գլխուն վրայ:

Բարոյական սպաննումէն ետքը, իրականը, ա՛տ կը պակսէր միայն կատարեալ չափը տալու համար մեր վարկչներու անհոգութեան և անզգայութեան:

Մաղթելով որ մեր այս պարզ եւ թաղութիւնը եւ թաղութիւն մը ըլլալէ անդին չ'անցնի, սակայն չենք կրնար մենք զմեզ արգիլել որ նորէն չի պնդենք այդ շէնքին անհրաժեշտութեան վերաշինութեան պէտքին վրայ, պէտք մը որուն վրայ մեր կրկին ժողովներուն անգամաց ուշադրութիւնը որքան հրաւիրենք այնքան քիչ է:

Գիտենք. դժբաղդաբար, որ անկարելին խնդրելու ելած ենք մարդոցմէ՝ որոնց հոգեւորն կրտսերագոյնն է կըրթական խնդիրը:

Մնացեալ տարի էր, եթէ յիշողութիւնէս մեզ չի խաբեր, գիշեր մը խօսք կ'ըլլար կոր ընտանիքի մը մէջ դպրոցական խնդրոյն վրայ:

— Էյ ճանրո՛ւ, տաճար ինչ ընենք, ա՛մեն տարի նոր լաթ կը շինենք կոր դպրոցի տղաքներուն, տաճար ինչ կուզէք:

Ահա՛ ինչ եղաւ պատասխանը ալ՝ դային վարչական ժողովներու մէջ տասը քսան անգամ մոնող ելլող տեղացի անձնաւորութեան մը:

Oh! le goujat.

Մենք դատարարութիւն կ'ըսենք, ան հազուադէպ խօսք կ'ընէ մեզի:

Մարդուս ապտակելը կուզայ և զօրով մեզքի մէջ կը մտնէ, չէ՛:

Արդ, այս ամենը գիտնալով, կ'եզրակացնենք թէ լուրջ միջոցներ ձեռք առնելու ժամանակը եկած է և չենք

կրնար ակնառնաւ ըլլալ անաքրօնութիւններու (anachronisme) անուս և անզգայ մարդոց կողմէ դործուած: Գերապատել Այվազեան Եպիսկոպոսը — թող ներուի մեզ ըսել — ոչ միայն ուսելու համար եկած է հոս և ոչ ալ բամբակ մշակելու: Իր աւագ պարտականութիւնը պէտք է ըլլայ դրա՝ զի կրթական հարցով և տալ անոր ունի ուղղութիւնը որուն կը կարօտի: Ամեն ուրիշ խնդիրներէ աւելի ասոր վրայ պէտք է կեդրոնանայ իր ամբողջ ուշադրութիւնը և պէտք է ի հարկին, անկարելին ընել փրկելու համար մեր մանկուոյն ապագան որ անցեալին շարունակութիւնը միայն կրնայ ըլլալ եթէ տակաւին թող տանք որ ապիկար ձեռքեր վարեն մեր ազգային վարչութեան ղէկը:

Պէտք է հասկնալ և ընդունիլ թէ մինչև հիմա Առաջնորդարանի շուրջը դարձող և պարբերաբար իրարու յաջորդող կեցիկի տղաներու շրջանակին մէջ չի կան ուղուած կարողութեան տէր անհատներ և ատկէ դուրս փնտռելու է ուսմունքի և փորձառութեան տէր ու գործունեայ ազգայիններ որոնք, փառք Աստուծոյ, չեն պակսիր Գահիրէի մէջ, գաղթականութեան հոս հաստատուելէն ի վեր:

Դպրոցի հոգը վրանին աւանդ մարդիկ պէտք է որ ամեն բանէ առաջ հայ ապրած ըլլան, հայերէն գիտնան, հայութեան գաղափարը ունենան և հայասէր զգացումներ տաճեն իրենց կուրծքին տակ:

Անանալիքներու դարը անցած է այլևս և ասոր պէտք է յաջորդէ անպատճառ բարենորոգումներու և ինքնաճանաչութեան թուականը:

Ուստի խոնարհաբար կ'առաջարկենք որ կարելի եղածին չափ շուտով յանձնաժողով մը կազմուի, ներս չընդունուածներու, entrée de faveur չունեցողներու, հերետիկոսներու դասէն. անոր մէջ կարելի է գտնել միայն, ձեռնհաս, անձնուէր, խեղճերուն հասնող մարդիկ և տալ անոնց՝ դպրոցները նվթարապէս և բարոյապէս բարենորոգելու նպատակաւ, ծրագիր մը պատրաստելու պաշտօնը:

Փառք Աստուծոյ և ապա փառք Գալստեան կարապետի, Գրէտի Լիոնէի մէջ՝ մէկ երկու հազար ոսկիներ

օգտակար բանի մը ծառայելու պատենութեան կ'սպասեն:

Լաւագոյն առիթ մը չկրնար երբէք ներկայանալ այդ ոսկիներով ազգագուտ բան մը մէջտեղ հանելու համար:

Կրկին, վայելուչ դպրոց մը չինեցէք անոնցմով, և եթէ չի բաւէ պարտք ալ ըրէք, մի վախճաք, քանի որ մեր ազգը Պօղոս փաշայի և Տիգրան փաշայի պէս պաշտպաններ ունի, որոնք անտարակոյս, առատաձեռնօրէն պիտի մասնակցին ատանկ ազգաշէն ձեռնարկի մը:

Մնացած մը որ դպրոցը չինուի, և կամ լաւագոյն տեղ մը փոխադրուի, այլ ևս դադարեցնէք հոգաբարձուներ ընտրելու գործիւնը, որ ջուրին մէջ ծակ մը բանալու պէս բանի մը չէ ծառայած: Բերել տուէք Պոլսէն, կովկասէն, ուր տեղէ որ կուզէք, մասնագէտ տնօրէն մը, կարող, ճանչցուած, պարկեշտ մարդ մը, տուէք անոր լեցուն ամսական մը, գործելու ազատութիւնը, քթերնիդ անոր գործերուն մէջ մի խառնէք, որովհետեւ ասանկ բաներու ձեր խելքը չի հասնիր, և այն ատեն տեսէք թէ որքան դիւրին է եղեր, կանոնաւոր դպրոց մը ունենալ, որմէ հայ աշակերտներ դուրս պիտի գան, լլվօրէն պատրաստուած կեանքի մէջ մտնելու համար:

Պոլսոյ ազգային վարժարանները, շատ գեղեցիկ արդիւնքներ տուած են, և չենք տեսներ պատճառ մը որ անոնց ուղղութեանը և յայտագրին հետեւիլ չուզենք:

Դպրոցներու համար տարեկան 1,000 ոսկի պիտո՞ճէ մը... Բայց այդ գումարով ինչե՛ր կարելի չէ ընել, պայմանաւ որ գործին վրայ գործընդունելը գործին մարդ ըլլան:

Գասը-Գիւղի ազգային վարժարանը, Օրթագեղինը, Ս. Խաչինը, Բերայինը, Սամաթիայինը, — մեր գիտցածները միայն յիշատակելու համար — այդ զբամին կէսովը հարկը անգամ աւելի արդիւնք տուած են քան Գալստեանը որ առաջնակարգ տեղ մը կրնար զբաւել եթէ 30 տարիէ ի վեր խել մը պանու-պաֆներ քթերնին մէջ չի խօթէին:

Նոր շէնք մը և կարող տնօրէն մը:

ահա ինչ պէտք է կրթական գործին վերծնութեան համար:]

Անցողակի դիտողութիւն մը. «Կենսական հարց մը» խորագրով խմբագրականներու շարքին վերջին մասն է այս օրուանը:

Ուրախ ենք զանոնք զրած ըլլալու որովհետեւ մեր փափաքը և նըպատակը եղած է մեր գաղութին օգտակար ըլլալ մեր համեստ կարողութեան չափով:

Վերջին վայրկեանին սակայն կը նշմարենք թէ անօգուտ գործ մը ըրած ենք այսպէս կէս երկոտանեակ յօդուածները գրելով, քանի որ այն աղաները, որոնց ուշադրութեան կը յանձնարարենք այս կենսական հարցը, շատ աննշան բացառութեամբ, անտարբեր պիտի մնան, խաղաղ անգամ չպիտի ունենան, չպիտի զգածուին, չպիտի ամփնան, նորէն գիտցածին պիտի ընեն, սա պարզ պատճառին համար որ մեր յօդուածները չպիտի կարգան... հայերէն չը գիտնալուն համար:

Doux pays. Թ. Ա.

### ԲՈՂՈՔ ԱՌ... (\*)

Չեմ կրնար վստահեցնել զքեզ թէ՛ զրած ժամանակ, միայն իմ սեփական ուժս և կարողութիւնս էր որ թելադրեց, որ ծնունդ տուաւ, որ միեց գիտ, գանգաւորս գրի առնելու և ծրարելու զանոնք թղթի կտորի մը վրայ:

Առանձին եմ հիմակ, բայց ո՛չ այնպէս առանձին ինչպէս մարդասպաններ իրենց բանտերուն մէջ: Կեանքը իր բեղմնաւոր պահանջներով կ'սպառնայ գլխո՛ս, պատարաստ գիտ լափելու վեցդիւնան վիշապի նըժան ու ես մոռցած ամեն ցաւ, պահ մը ինքսինքս կը գտնեմ կարծեաց և նմանութեանց աշխարհին մէջ:

Ուզեցի ամպ մը ըլլալ, ցօղոտ լալիւս ամպ մը, գիշեր թէ ցօրեկ, իմ աչքերու թացութենէն արցունքիս սպասէին՝ ծաղիկ:

(\*) Այս յօդուածը անժամօթ մը կուգայ մեզի: Ապահովապէս գրող մը չէ ամբայց ամսակ ինքնատիպ, ամսակ օրթիքալ կերպով բացատրելու եղանակ մը ունի որ՝ կ'արժէ հրատարակել, գաղափար մը ունեցաւ ու համար պարզ հոգեմեղմուն, կոյս ուղեղներու մտածելու եղանակի մը վրայ: Այս յօդուած մը չէ, այլ արթիկ օր փութօղիկի մը:

## Գ. Է. ՄԷԼ ՎԱՃԵԱՆ

ԳԱԶԻՐԷ — ՄՈՒՍԳԻ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՅՈՑՈՑՆԵՐՈՒ. ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ ԵՒ ՖՕՆՕԿՐԱՑՆԵՐՈՒ



զերը, վարդերը և բոլոր բոյսերը. իմ ար-  
ցունքս ծաղկանց կեանքը ըլլար և մահս  
թոշոցը զարթնումը. Բայց խորհեցայ թէ  
մէկ օր անգուցի չոր քամի մը իր աւելով  
զիս կը ցրուէ շունչերուն յառաջ ու ես  
կ'անհետանամ: Հակառակ իմ փափաքիս,  
ոչ, ամպ չեմ ըլլար ըսի...

Փափաքեցայ լուսին մը ըլլալ, սրտկոկի  
բանաստեղծներու, գրականներու, նկարիչ-  
ներու և արհեստներու նիւթը ըլլալ, լայ-  
սէս, տեսքէս, գիրքէս, կարմրութենէս ու  
ճերմակութենէս մեկնութիւններ ընէին, վի-  
ճէին, կոտէին, սպաննէին, զիրար բզկտէին  
և ես հեռուէն... այն բարձրէն... դիտելով  
այդ խնկրեցի՝ ծիծաղելի անոնց վրայ,  
բայց հոս ալ հաճոյք մը չգտայի. գտայ որ  
ուսնի կեանքը 30 օրուան շրջան մը ունի,  
միշտ նոր և միշտ հին և գաղտնիք հոն է  
որ շատ կը չարաչար, մի պարագայ որ  
ես կը փախիմ անկէջ. ուրեմն լուսին ու  
չեմ ուզեր ըլլալ...

Հետաքրքրեցայ արևուն կեանքին և ը-  
սաւ ինչ թէ 24 ժամուան մէջ պէտք ես  
ամբողջ երկրագունդը շրջել և ամեն օր.  
ուրեմն արեւը այնքան չէր որ և այնքան ան-  
նախանձելի վիճակ մը ունի, որ իրմէն զատ  
ուրիշ մը չ'յարմարիր. մինակ քայլել, մի-  
նակ ապրել, այդքանի չեղողութիւն բնաւ  
չ'յարմարեցաւ կեանքին և կարճ կապեցի...

Վերջապէս պատիկ աստղիկ մը ուզեցի  
ըլլալ հօրեղանին վրայ, երկնքի անհունու-  
թեան կապտոտ սալմանին մէկ պզտիկ աչլը,  
և միշտ մէկ տեղ մը, մէկ լոյս մը, մէկ  
աչք ըլլալ մէկ երկրի համար, ապրելի ուժս  
անապատ ըլլար, և իմ զրացի աստղերը բնաւ  
չ'խանութիւն իմ գործիս. սակայն իմացայ  
որ աստղերը խիստ նախանձատ են, կրքոտ  
են և միշտ թշնամի իրարու, ըսի որ աստ-  
ղիկն ալ չեմ ուզեր ըլլալ. Ու այսպէս  
անորոշ և անյայտ վիճակիս մէջ, մտածեցի  
թէ ինչով կրնամ բացատրել զրուսիւնս.  
Ինչ կրնամ ըլլալ և ինչ կրնամ ընել... Ան-  
օգուտ մտածում, ու անվերջ յոգնութիւն,  
և ահա միտքս մտաբանութեան դիմելու  
միջոցը խորհեցաւ: Դիմել ուրիշ մտքերու,  
յղացումներու, գուցէ կը հանդիպեմ նորու-  
թեան մը որ կարողանայ թելադրել բառով  
մը, բացատրող դիրքը, վիճակ և զգա-  
ցումս:

Մտքիս ուժեղ և ամենակարող զօրու-  
թիւնովը շուրջ հաւարտած գտայ այն ա-  
մեն հին ու նոր պատմութիւնները որոցմէ  
կարելի էր քայլերուով. անցի և վերջա-  
ցուցի վայրկեանապէս. Սր. Գրեքն, Հին  
Կտակարանէն, Շնորհալի երգերէն, Նա-  
րեկացոյ մաղթանքներէն և կախարդակո-

տութիւններէն, Սահակի, Մեսրոպի բա-  
նաստեղծութիւններէն, Սողոմոնի Առակա-  
ցէն, Պողոսի, Պետրոսի նամակներէն, և  
Դավիթ Սաղմոսէն ընթերցումներ, չկայ,  
չգտայ և ոչ մէկ բառ որ կարենայի բացատրել  
իմ մէջս:

Գրեթէ յուսահատութեան մասնուելու  
չէմքին վրայ կեցած էի, խօլ լուսնեան մէջ  
դէպի լուսանցքը վերցուցի աչքս մոտմոլար  
և խելագարի նման. միտքս իր շրջանը լը-  
րացուցած՝ ինչ դարձաւ, բարկացող հեգ-  
նութեամբ մը, — Ձգէ՛, ըսաւ այդ հինքերը,  
ինչ արդիւնք կ'ուպասես ապիկց, դարձա՛ր  
այս կողմ ուղարկութեանդ: — Եւ ես սկսե-  
ցի թղթատել գրքեր, Հիւկոն, Շիլլերէն,  
Տիւմայէն, Սինքլէյդըն, Րաֆֆիէն և Դու-  
րենսն. դարձեալ յուսահատութիւն. չերե-  
ցաւ, չտեսայ մէկ նախագաստութիւն որ ուղ-  
ղութեան մը առաջնորդէր ինձ:

Դարաւ կ'զգայի, ապրելու պապակն էր  
այդ. կուգեմ ապրել և գիտնալ, հոս չկայ,  
այստեղ չգտայ. սակայն պէտք է յուսահա-  
տել, ոչ, ներքնական մէջ ինքզինքս աւելի  
մեծ կ'զգամ, մարմինս երկրագունդին չափ  
կ'երեւի աչքիս և միտքս անուանումս աշխար-  
հի մը պէս, բայց ըսի ինչ թէ քեզմէ մեծ  
աւելի կարողագոյն մը կայ որ կ'ընէ, կը  
կառավարէ և կ'ստեղծէ, և ահա քեզ յե-  
տոյ ես ինքզինքս կը գտնեմ իմաստութիւն  
նեղնչողիմ, ստեղծողին աթոռին յառաջ:

Ամոսականը գէմքէս, գոյնէս հասկցաւ որ  
վրէժի մտաբանութեամբ կանգնած եմ իր գի-  
մաց, տեղէն չարմեցաւ բնաւ. մէկ ինչ կը  
նայէր, մէկ իր զօրքերուն կը հրամայէր.  
ամպերը, կայծակները շուրջ կը հաւաքէր  
և վայրկեանապէս, ամեն կերպով սպառնական  
դիրքի մը մէջ գրաւ ինքզինքը, ու մասին  
ժայռովը ինչ ցոյց տուաւ այն ամեն շան-  
թեքը որ պիտի տեղային իմ գլխիս եթէ  
պզտիկ անխոհեմութիւն մը ընէի:

Այդ ամենքի հանդէպ ես լուռ էի և կը  
օպասէի որպէսզի ամենակարողը ինք հե-  
տաքրքրուի թէ ինչու գնացած եմ իր մօտ.  
բայց ինք լուռ էր և զիս կը շարժարէր իր  
գիմաց ոտքի վրայ ձգելով, հիմա քեզ մը  
հանգարտ էր և պաղարիւն աւելի, քանի  
կը հասկնայի թէ կեանքս վերջ տալու և  
տանջանքս յրանալու. ուսմանին մէջն եմ,  
ըսի ինքնիրենս պիտի պահանջեմ այդ ամեն  
բացատրութիւնները որոնք մինչև ցարդ եր-  
կնքի և երկրի հնաւուր տարածութիւնը  
բաժնած է իրարմէ և պատճառ եղած է  
թերեւ պահելու մինչև այսօր և եթէ այդ  
մասին սպաննէ զիս դարձեալ երջանկութիւն  
է ինչ, քանզի այն բարձրէն գոյալով պիտի  
իջնեմ դէպի վար, և այս աշխարհիս գի-  
տունները պիտի հետաքրքրուին այդ գաղտ-  
նիքովը:

2.  
(Շարունակելի)

ըր չտալքեմ, չաղելով իր տկարութիւնը  
ցոյց տալ այդ մարդկերուն առջև, գերուհին  
հապարային փաթեթեցաւ և ամենէն ա-  
ռաջ ինքը անցնելով տունը մտաւ:

Հոն ալ, պատրանք մը կ'ապասէր իրեն.  
Վերելը, հրահանք առած չըլլալով, բան  
մը չէր կրցած պատրաստել. Բրէնտին նա-  
մակը՝ գոր իրպալ իրեն զրկած էր փողերի  
տունը, միմիայն կը յանձնարարէր որ իրեն  
զրկած կիները, որ իր անձնական տանը  
մէկ մասը կը կազմէին, կրցածին չափ ա-  
ղէկ տեղաւորէ:

Հրամանը որոշ էր, բայց զործարդու-  
թիւնը դժուար:

Չանոնք տեղաւորելը շատ աղէկ. բայց  
ինչով:

Բրէնտին սկսեց ընել միայն կահաւորութեան  
էր. այն ալ, այդ կարասիները մասնաւո-

### ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

ԷԼՎԻՐԱ ԻՇԽԱՆՅԱՆ

Սպանիոյ գահին թեկնածու Տօն Գար-  
լոսի առիթնեկ աղջիկը Էլվիրա զոր Թօլի  
նկարչիւր առանգած էր, այս վերջինին ըն-  
կերակցութեամբ Պարսէլոն հասեր է: Ամիւր  
տեղաւորուած է Սէն-Ժերմանի թաղին  
առնելուն միայն մէջ, որ կապիկ շատ հա-  
մետօրէն Պարսէլոնի ազգական քաղցի-  
նիներու պէս: Կ'ըսեն թէ իշխանուհին՝ որ  
սրտի հիւսնագութեան կը տապի, բաւական  
աւար է:

Գաթալոնիայի Գարլիտները որոնք քանի  
մը շաբաթ է ի վեր մեծ շարժման մէջ են  
սաստիկ տխրած են, տեսնելով թէ ինչ  
պարագաներու մէջ կը գտնուի իրենց պե-  
տին աղջիկը:

### ԱՄԵՐԻԿԱՆ ՆՈՐ ՄԱՐՄԵՆԱՄԱՐԶԸ

Գիտէ՞ք որն է նոր մարմնամարզը զոր  
երկու ամերիկացի օրիորդներ հնարած են  
վերջերս: Ոչ, ձեր մտքէն չանցնիր այլապի-  
ս խաղեր, հայ օրիորդներ: Մոտիկ ըրէք,  
բայց շատ մի տեսնէք ձեր ամերիկացի բոյ-  
րերուն:

Պարկէշտ ընտանիքէ երկու օրիորդներ,  
Միս Գլէյզ Գլէյ և Միս Ֆլորա Բրէսթոն  
օր մը յանկարծ անհետացան, յուզման մէջ  
ձգելով իրենց քաղաքը: Աղբիւն անդին  
առնուած տեղեկութիւններէ իմացուցաւ  
որ Մակեթման մեկներ էին հուզականե-  
րէ գերի բռնուելու և Միս Սթրիտի յուզում-  
ները կրելու հասար: Պէտք եղած բոլոր  
զգուշութիւնները նախապէս ձեռք առնուած  
էին և զրամատերի մը միջոցով՝ փրկանքը  
առաջնուց վճարուած էր Սթրիտի յուզակ-  
ներուն գործակատարին: Երկու օրիորդները  
առանձինզ օրէն աւելի չէն յուսար գերի  
մնալ, և յետոյ իրենց երկիրը պիտի վե-  
րագտնան:

Աղբոր պիտի ըլլար սակայն եթէ յե-  
ղուակները ձգնարիտ աւազակներու պէս  
վարուէին իրենց հետ և զրամը զրպանելէ  
ետքը շնորհ զահէին օրիորդները ո-  
րոնք ինչպիսի համար կերթան գերի կը  
բռնուին:

### ՏԻՎԻՆ Է. Ա. ԱՐՄԱՆԵԱՆ ԴԵՐՁԱԿՈՒՅԻ

Քաղաքիս մէջ ծանօթ այս զերծակուհին  
պատիւ ունի ծանուցանելու իր բազմաթիւ  
յաճախորդներուն ինչպէս նաև յարգող հա-  
տարակութեան թէ՛ այս անգամ իր Պապ-  
է-Լուիսի ուրբախէն փոխադրած է Պապ-Է-  
Հասկա փողոց Տէպպանէի տարաշէն տան  
մէջ, առաջին յարկ թիւ 3 արարձամանը:

2—10

րապէս Բրէսթոն համար զրկուած ըլլալով  
խեղճ վերակացուն առանց մասնաւոր հրա-  
մանի՝ չէր կրնար ուրիշ գործածութեան  
յատկացնել զանոնք. բայց դարձեալ ան-  
կողմնէր պէտք էր... գտնէ մէկ անկողին  
մը՝ այն կնոջ համար որ իրեն այնպէս  
կ'երկար թէ միտնեցուն կը հրամայէր...  
ընկերուհիները կրնային պատահանելով  
բաւականանալ:

Ինչպէս երբ առաջին յարկին սենեակը  
մտաւ, վերջապէս բարկութիւնը գուրս  
պոռթկաց:

Տուն անգամ չէ՛ր իրեն տրուածը, գնաւ  
էր... ոչ իսկ տաք մը կար, ոչ իսկ կարա-  
սի մը, ոչ իսկ գո՛րգ մը... Ուրեմն, թող  
բռնէին զինքը անմիջապէս Նեղոսը նետէին,  
նոյն բանն էր:

Գլխաւոր վերելը բացակայ էր, ինչպէս

### Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Գեր. Այվազեան Եպիսկոպոս, երեքշաբ-  
թի օր Աղեքսանդրիա մեկնեցաւ:

— Ն. Վ. Պողոս փաշա Նուպար Մէ-  
սաժըրի «Քօնկօ» շաղկապով Աղեքսան-  
դրիա հասաւ երեքշաբթի օր և քանի մը  
օր հոն մնալէ ետքը քաղաքս պիտի գայ:

— Թէ և ծանուցուած էր թէ վաղը ազ-  
գային Գաւառական ընդհ. Ժողովը ի նիստ  
պիտի գումարուի, բայց Ս. Առաջնորդին  
բացակայութեան պատճառաւ յետաձգուած է:

Աւասիկ պատճէնը այն հանրագ-  
րին որ 130 հոգիի ստորագրութեամբ  
պիտի ներկայացուի Ն. Վ. Տիգրան  
փաշայի:

Առ Նորին Վսեմութիւն  
Տիգրան փաշա տ'Ապրօ  
Առնապետ Ազգ. Երեսփո-  
խանական Ընդհ. Ժողովոյ:

Ի Գահրէ

Վսեմաշուք փաշա՛

Մեր նուիրական պարտականութեանց մէջ  
թերացած պիտի լինէր եթէ Ձեր ուրա-  
խաւէտ վերադարձին առթիւ յապաղէինք  
Ձեզ բարի գալուստ մաղթելու և վստահեց-  
նելու զՁեզ՝ մի անգամ ևս, թէ որպիսի  
խորին յարգանքով Ձեր մեծանուն անձին  
յարած ենք:

Ոչ ոք առաւել քան զմեզ կը տեսնէ Ձեզ  
Ազգին մեծ բարեբարը, միակն որուն նա  
կարող է աւանդել վստահարար իր շահերը:  
Մէկէ աւելի են ուրեմն այն պատճառները  
որ զմեզ կը թելադրեն Ձեր վսեմութեան ներ-  
կայացնել մեր ցաւերը, լիայոյս որ անոնք  
Ձեր բարեկամացման հոգածութեան առարկայ  
պիտի լինին:

Ահաւասիկ մեր ցաւերը:

1.—Ազգ. գործերն առ հասարակ խիստ  
հե՛ղի են նախանձելի հանգամանք մ'ունե-  
նալէ, անշուշտ զա վերադարձի է վարիչ իշ-  
խանութեանց կամ անկարողութեան և կամ  
անհոգութեան: Արմատական փոփոխութիւն  
մի բացարձակապէս անհրաժեշտ է. զայս  
չերանգին Ձեր որոշման կը յանձնարարենք:

2.—Ազգ. վարժարանի այժմու հոգա-  
բարձութիւնն իւր պարտականութեանց մէջ  
թերի է, խիստ թերի. ինկատի ունենա-  
լով սոյն ուսումնական հաստատութեան ար-  
դի աննախանձելի վիճակը՝ համարեցաւ քեզ  
կրնանք ըսել որ Պ. Հոգաբարձուներն ի-  
րենց պաշտօնին անձերը չ'են, և պէտք է  
փոխուին:

Վարժարանի խնդիրն, վսեմաշուք փաշա,

նաե երկրորդ վերելը որ Մարտիկացի  
Ֆրանուացի մըն էր: Հիմայ հոն գտնուողը  
մասնաւորաբար մշակութեանց գործին կապ-  
ուած էր, պաշտօն ունենալով անձամբ հսկել  
հողերուն բարուր արգիւնաբերութեան վրայ  
և երեք չգատուելով իր պաշտօնատեղիէն,  
իրաւ բարի մարդ մը, քիչ մը միամիտ, հա-  
մալ անձնուէր Բրէնտին սրունը ընդատուն  
(կաթեղարայն) էր:

Այդ կիներուն գալովը տատամսութեան  
և շուարման մէջ ինկած ըլլալով, կնոջը  
բով վազեց և իր տաղանայը անոր իմացուց:

Չօհրա (այս էր կնոջը անունը), հարուստ  
Ֆելազ կին որ իր ամուսնութեամբ իր  
ծնած դուստրի այդ անկիւնին մէջ հասա-  
րակ քաղցրին կնոջ աստիճանին բարձրա-  
ցուցած էր, շատ հպարտ էր այն կարեւ-  
րութեան վրայ զոր իր ամուսնոյն զիբը  
իրեն կուտար:

### ԹԵՐԹՕՆ «ՓԱՐՈՍ» Ի (23)

ԺԵՂԱՆ ՏՊՎՐԷ

### ԲՐԷՆՍ ՄՈՒՐԱՏ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲԱՐՔԵՆԷ ՆԵՐՇՆՁՈՒԱԾ ՎԷԳ

ԳԼՈՒԽ Է.

Իրեն համար նոր այս տեսարանին առ-  
ջև, ի տեսիլ այդ պատկերներուն որ ալ  
այսուհետև իր մենաւոր կեանքին միակ  
բզբօսանքը պիտի ըլլային, Ինչպէս վախճաւ  
որ չպիտի կրնայ կատարութիւնը զգալ:

Հապտեհներ բերած էին. ուռեցած գուռ-  
ները, որ այնչափ երկար ժամանակէ ի  
վեր անգործածելի մնացած էին, վերջապէս  
բացուեցան երկու կաշմուռն ֆելազներու  
միման առջև, և զեռ աչքերէն արձուներէս-

# Գ. Ե. Կ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ  
ԳԱՀԻՐԷ, ԳՈՐԾԱՐԱՆ ԹԵՎԹԻԳԻԹԷ — ԳԼԽԱՌՈՐ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ՆԱԽԻՆ ԶԱԲԹԻԹԷԻ ԾԷՆԻՐԸ



խիստ կարեւոր է՝ առ այդ Ձեր բոլոր ուշադրութիւնն հրաւիրելու համար. իւր ամսական պիտոճէն 60-70 Եփրատ. ոսկի է. ուրեմն ինչո՞ւ չգտնուի այն միևնոյն աստիճանի վրայ, ինչպէս միւս հասարակութեանց համանման հաստատութիւնները: Բարեբախտաբար մեր Ազգին մէջ չեն պակսիր բարձրագոյն Ուսումնարանները շրջանաւարտ եւ քիտաւարդներ, որոնք ի մեծ գոհունակութիւն ամենուս՝ կարող են արդի հոգաբարձութեան տեղն անցնել:

3.—Անցեալ յունիս ամսոյն մէջ այս մասը հանրադիր մի մատուցած ենք վիճակիս Ս. Առաջնորդին՝ Պատ. Քաղաքական ժողովոյ փոխանցելու համար, բայց ցաւ ի սիրտ կը յայտանք որ ցարդ որ և է հետեանք շարունակաւ ժողովրդեան ոտին ձայնին:

Վստահ որ Ձեր վսեմութիւնն իւր բարձր հոգածութեան առարկայ ըրած է Ազգին շահերը:

Ենք Ձերդ վսեմութեան  
Ամենախոնարհ ծառայք:  
(Ստորագրութիւնը)

### ԱՐՓԻԱՐԻ ՄԷԿ ՆԱՄԱԿԸ

Հետեւեալ նամակը որ՝ միտքեան խնդրով զբաղող Միտքեալ անուն մէկու մը գրած է Արքիմար, իր մէջ պարունակած գաղափարներուն համար արտառուպել խնդրաւոր է մենէ:

Սիրելի բարեկամ,  
Կի՛մանամ թէ տակաւին կը շարունակես Գանձերդ որ անցեալ տարի սկսեալ էիր, ինքնաբերաբար մտնելով երկու կուսակցութեանց միջև, միտքիս յառաջ բերելու համար: Առաջարկած պայմաններով զէմ եթէ այն ատեն ընդգիծութիւն տեսար, պատճառն այն էր որ ներքին կարգապահական խնդիրներ պարտաւորեցին զիս պաշտօնիս վրայ մնալ մինչև Պատուոյ Առեանին մը գումարով: Այդ պարտականութիւնս, ինչպէս տեսանք, զգուշացուցեց մատնեց միտքեան առաջարկը:

Անկից ի վեր կացութիւնը փոխուած է: Ահա ներկայ տարուան յունուար 15էն իւրեք է որ ինքնաբերաբար հրաժարած եմ Հնչ. կուսակ. վարչութեան անդամակցութենէն, ս. ժայիսէն իւրեք ալ «Նոր Կեանքի», վարչութիւնէն ու դարձած եղած եմ պարզ շինարար մը այն կատին՝ որուն տարիներէ ի վեր կը նուիրեմք մեր բոլոր սիրտը և ոյրը և որուն միշտ հաւատարիմ պիտի մնամ, ինչ ալ ըլլայ դիւքս:

Եթէ այս յայտարարութիւնս կրնայ թեղ

Կիններուն զաւր իմանալուն պէս, բարեկամ, սկսաւ պօռալ կանչել. հիմա կուգային իրեն խորհուրդ հարցնելու. իրենք սողին խորհրդակցած ատեն, անդին պալատին տիկինները պիտի սրտնեղէին անսարակոյս, դատարկ տանը մէջ: Ու հանրմը իրեն յանձնաք պիտի գտնար, եթէ միւսները զանգատէին:

Իր զանգաղ նկատհասակ մարմինէն չլսաւսուելիք ճարտարութեամբ մը, զբոսը կը շտկէր, օժանակ քուտած բայց դարձեալ պանգրահներ մազերուն մէջ ծաղիկներ կը քնէր, շիկարմիր մետաքսէ կապակէ մը վրան կը քաշէր անապարանօք և, ամենէն զեղեցիկ գոհարներովը ծածկուած՝ զէպ ի բնակարանը կը պանար:

Ձերքը շտապեցնող տնդոտ հապճեպին մէջ, հազիւ թէ կապած էր հապարան որ,

գիրացնել քու ձեռնարկդ, սիրայօժար կը բաղձամ որ անկիս գործածես հարկ պատած լաւագոյն եղանակովդ յօգուտ միտքեան խորհրդով: Ամենին փոքր չեմ բեր որ այս ընթացքս կրնայ պատուակ հայրթայթել շարակցութեանը կարգ մը անձերու, որոնք ամեն երկրի ու ամեն ազգի մէջ գտնուած են, և որոնք չեն կրցած յուսահատեցնել երբեք հանրային բարիքին սըրտանց կամեցողները:

Գիտես թէ «Արքիմարի խնդր» ըսուած վէճին մէջ ինչ աւելի նախաձեռնարկութիւն գնողներ եղան որոնք ուրիշ տեսակէտէ, ինծի նոյն իսկ հակառակորդներ էին: Այս երեւոյթը կը բացատրուի անով որ իմ խնդիրս հանրային բարձրագոյն բարոյական խնդիր մը եղած էր, նման Տրէֆլետի խնդրին:

Քու պայմաններուդ մէջ, սիրելի բարեկամ, հատ մը կար արդէն որ գտնուեալ կուտար այս շատ հասկնալի և արդար մը տահադութեան, և որ կը մնայ անշուշտ նորին:

Ես հատուտի եմ անձնապէս — և կարծեմ բոլոր հնչակեաններն ալ երբ որ վերահասու ըլլան այդ պայմաններուն, նոյնը պիտի մտածեն, — թէ՛ ի նկատ առնելով երկու կուսակցութիւններու կողմէ բլխած զգուշացումները, այդ պայմանները կը կազմեն միջին ճամբայ մը, ուր երկու կուսակցութիւնները կրնան մտնել, առանց որ իւրաքանչիւրին հաւաքական արժանապատւութիւնը և դիւրագոյնութիւնը հարուած մը կրեն:

Նամակս չփակած, սիրելի բարեկամ, պարտք կըզգամ իմ գնահատումի հարկս նուիրել միտքեան համար ըրած բոլոր ջանքերուդ: Մեր բոլոր աղէտներէն յետոյ, ոչ մէկ մարդու գիտար ըլլալու է, մանաւանդ անոնց որոնք մեզի պէս քսանը հինգ տարիէ ի վեր կը հետամտին հանրային բարեքին, լոնցնել իր անձնական նկատումները և նոյն իսկ ոխերը, և մենք՝ հինքս պետք է անձնամոռացութեան օրինակը տանք մեր կրտսերներուն:

Ա. ԱՐՓԻԱՐ

Լանտոն, 30 Սեպտ. 1901

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՅԽԱՐՀԵՆ

ԷՏՈՒՄ Է. ԵՒ ՀԷՆՐԻ ՏԸ ՎԻԼԼԵՐ. — Անգիւղ թաղաւորը ընդունեցաւ Հէնրի տը Վիլլէր Գարի գաղութին արգարութեան պետը: Այս տեսակցութեան կարեւորութիւնը դիւրին է գուշակել նկատելով որ Հէնրի

իր խօլ արշաւին մէջ, պարտեղին մէջտեղը վրայէն վար ինկաւ, որուն համար վէճիւն իրն ամուսինէն խիստ յանդիմանութիւն մը կերու, մանաւանդ որ եաշմաք ալ չէր տներ վրան և անկէ անցնող երկու ֆէլաշներ երկար բարակ նայեցան անոր բաց գէմքին:

Երբ ծանցաւ իրապարհ զոր պալատի երկու անգամ տեսեր էր, ալ չափ չունեցաւ իր յուզմունքը. գեղանի գերուհին շնորհալուութեամբ անտեղեակ ըլլալով, իրաւ կարծեց որ օգափոխութեան համար եկած էր և առաջադրեց անոր որ իր եռանդուն սպասարկութեամբ արժանանայ հանրմին և անոր որդւոյն ապագայ շնորհներուն:

Համոզեց իրապարհ և բնկերուհիները որ այդ գիշերուան համար իր տունը հիւր ըլլան. յաջորդ օրը կը հոգացուէր իրենց

տը Վիլլէր շերմապէս կը համակրի Պօլընիս:

Քնտիրանաբար չի գիտցուի թէ՛ ինչ անցաւ դարձաւ այդ տեսակցութեան միջոցին, բայց յայտնի է որ խօսակցութիւնը բացարձակապէս իրեն նիւթ ունեցաւ: Հիւսիսային Ալիքիլի ներկայ վիճակը, և կրնայ ըլլալ որ թաղաւորը հարցուցած ըլլայ Հէնրի տը Վիլլէրի թէ՛ որո՞նք են հաշտութեան պայմանները որ կրնայ ընդունել ըլլալ Պօլընիսը:

ԱՏԱԼԴԵՐ ԻՇԽԱՆԸ. — Եաֆաէն կիմացնեն որ «Շարքթ» նաւը ուր կը գլաւնուի Առաջադէր իշխանը, անցեալ ուրբաթ օր յիշեալ նաւահանգիստէն մեկնեցաւ զէպ ի Սիրիոս երթալու համար:

ՊԱՊԻՆ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ. — Ժամանակէ մը ի վեր ամեն տեսակ լուրեր կը պտտին Պապին առողջական վիճակին վրայօք: Ուսանք կըսեն թէ գերագոյն վայրկեան կարապետող զգայազրկութեան մէջ ինկած է արդէն, ամանք ալ կըսեն թէ դեռ կը վայելէ իր մտաւորական և ֆիզիքական բոլոր կարողութիւնները: Ճշմարտութիւնը սա է որ պապը ոչ անմահութեան մէջ կը գտնուի և ոչ ալ զառամութեան մէջ, այլ հիւժման մը մէջ որ գանգաղ հոգեկարք մըն է:

### Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Գահիրէի իտալական դիւանագիտական գործակատար կոմս Մանժոնի երէկ առաւօտ շնորհաւորական հեռագիր մը ուղղեց Վիլլէրի Էմմանուէլ Գ. ի Զոմմ հայրընդով իրեն եղբայրաբան իտալացի գաղութին մաղթանքները իր ծննդան 32րդ տարեդարձին առթիւ:

— Գրածը կոմսն ու կոմսուհին միտք ունին՝ ճամբորդութիւն մը ընել Նեղոսի վրայ վերին Եգիպտոսի մէջ:

— Խտիլին Խարթումի մէջ անցնելիք ճամանակին յայտագիրը վերջնականապէս դնուած է: Դեկտեմբեր 3էն 7 Սուտանի ընդհանուր կառավարիչը հացկերոյթ մը և ֆայզօքը մը պիտի տայ կառավարչական պալատին մէջ. Խտիլը պիտի ընդունի Սուտանի շէյխները, բարձրաստիճան պաշտօնեաները և երեւելիները, Խարթումի պահակ զօրքերուն զօրահանգէս մը և այցելութիւն մը Օմտուրմանի շրջակայքը ուր տեղի ունեցան 1898 Սեպտ. 3ի պատերազմը:

Սև, սպիտակ և կանաչ դրօշակներ պիտի նշանակեն նախորդ խալիֆային և տէր վիշներուն գրաւած տեղերը և բրիտանական

բնակարանին կազմակերպութեան գործը... փառք Աստուծոյ, Մանսուրա բուական մօտ էր և մէկ օրուան մէջ կարելի էր իրենց տեղաւորման համար անհրաժեշտ ելող բաները ձեռքի, մինչև որ Բրէնսէն հրամաններ ընդունէին:

Նորէն, իրապարհ և կիները բօղբերնի դրին, և առջևնուն նոյն ինքն վէճիւր լսողները ձեռքը, պարտեղէն անցան:

Իրապարհ քնաշըլիկի բալուստը մը կը քաշէր, զինքը խեղդող բարկութիւնը մտածելու անգամ կարողութիւն չէր թողար իր վրայ, մահաաբաւս ցուրտ մը զինքը կը համակէր, մինչդեռ ճակատը տնդէն կը տոչորէր:

Երբ վէճիւն տունը հաւաւ, չուրեց ուտել իրեն համար պատրաստուած կերակուրը, սենեակին ուր ըլլաւ հարցուց, և

և եգիպտական դրօշակները ցոյց պիտի տան յաղթական վաշակունի դիրքերը:

— Պատանի ընդհանուր կառավարիչը քանի մը օրէն երեմական նախարարութեան պիտի ներկայացնէ 1902ի շրջանին պիտոճէն:

### ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԼՈՆՏՈՆ, 11 Նոյ.— Մամուլին մեծ մասը յուսախար եղած է տեսնելով որ Լորտ Մարկպուրի իր արտասանած ճառին մէջ չի յայտարարեր թէ՛ պէտք եղած կորով պիտի գործածուի պատերազմը օր առաջ վերջացնելու համար, և ասանկով այն կարծիքը կուտայ ժողովրդին թէ՛ կառավարութիւնը դեռ ըմբռնած չէ իր պարտականութիւնը:

Թայլը Սերպիոյ երկաթուղիի գծին աւարտման մասին խօսելով կըսէ թէ՛ Ռուսիա երեցածին չափ բարգաւաճ չէ և կը հարցնէ թէ՛ այն չեղող բայց մեծածախս ձեռնարկութիւններէն ինչ առաջ պիտի գայ, տուրքերու նուազում թէ յաւելում: (Ռ)

Կ. ՊՈԼԻՍ, 11 Նոյ.— Ֆրանսայի գծակաւարը այցելութեան գնաց Արտաքին Գործոց նախարարութեան, և դրօշակը վերստին սկսաւ ծածանիլ Դեպտատան վրայ: (Ռ)

ԼԱՀԷ, 11 Նոյ.— Իրաւարարութեան ատենին վարչական խորհուրդը ամսոյս 20ին պիտի գումարուի Պօլընիսին խնդրանքը ընդունելու համար: (Ռ)

ԼՈՆՏՈՆ, 12 Նոյ.— Հեծեալազօրներու բոլոր պահեստի խումբերը հրաման ստացան կարելի եղածին չափ ոտուար ջուկատներ կազմել պատերազմի դաշտին վրայ գտնուող իրենց վաշտերը երթալ զօրացնելու համար:

Կորուստներու վերջին ցուցակը կը բաղկանայ 86 մեռելներէ և 216 վիրաւորներէ: (Ռ)

### Ա. Զ. Դ.

ՏԻԿԻՆ ՏԻՐՈՒՀԻ ԳԱԼԷՏԷՐ ՓԷՇՏԻՄԱՆՃԵԱՆ, արեւելեան և եւրոպական երաժշտութեան մասնագէտ, Պոլսէն այս անգամ Գահիրէ եկած ըլլալով, պատրաստ է զանազի դասեր տալ, նորագոյն մէթոտով, իրեն զիւնող աշակերտաց:

Փափաքողները պէտք է դիմեն Տիար Ս. Մաճարեանի գրասենեակը, Պապ-Էլ-Հատիմ փողոց թիւ 31:

6—20

առանց գօտին անգամ քակելու, հազուատներով ինկաւ իրեն ցոյց տրուած անկողինին վրայ, բոկով թէ շատ յոգնած էր, յետոյ, երբ դուռը զոցուեցաւ, գրուել թագեց բարձրուն մէջ գորս խածաւ, մոլեգին հեծկտանքներով իր վիշտը դուրս պոռթկաց, դառն արցունքներ թափելով որոնցմով դժգոհած այտերը ողորուեցան:

Յաւի այս պայթումին յետոյ՝ որ կարճատե եղաւ, իրապարհ արդէ անցուց իրեն տրուած սենեակը, նոյն իսկ վէճիւն ընտանեկան սենեակն էր, որովհետեւ կինը բրէնսին օճանեալ կնոջը համար ուրիշ բաւական գեղեցիկ տեղ մը չէր գտած: Թեւեաւ անոնց ամուսնութեանը ժամանակ՝ այս սենեակը մաքուր եղած էր, բայց անկէ ի վեր տանեկեկ տարի անցած էր, և որովհետեւ այդ տանեկեկ տարիներուն մէջ վեց անգամ մաքրուած չէր, կարելի էր հասկնալ կարատիներուն գտնուած ողորակ վիճակը:

(Շարունակելի) Թարգմ. Յ. ՍԵԹԵԱՆ

# Յ ԲԷՄՊԷՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷՐՆԵՐՈՒ

ՄԹԵՐԱՆՈՑ ԵՒ ՎԱՃԱՐԱՆՆԵՐ ԳՐԱԿԱՆ ԽՈՒՍԻՍԻՆ ԵՒ ՍԻԿԱՐԷՐՆԵՐՈՒ ԵՒ ՍԻԿԱՐԷՐՆԵՐՈՒ



# Մ Ո Ւ Ջ Ո Ւ Ա Ն Լ Ա Յ Պ

## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒԵՈՐՔԻ ԽԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆՍՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ 1843 ՎՆ

ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ ՄԷԿ ՄԻԼԻՍՈՒ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱՋԱՐ ՁԵՐՆԵՐ

Ապահովագրական ամեն կապի դրույթները կը գտնուին խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զուական դրամագլուխ, ցման եկամուտ, եւայլն

ՄՈՒՋՈՒԱՆ ԼԱՅՊԻ սակագինը և ապահովագրութեան զանազան դրույթները չուսումնասիրած մի ապահովագրութիւն — Առատաձեռն պայմաններու ճեղքելով ճամար գումար ի Գահիրէ առ ՊՊ. Ն. ԲԻՐՁԻՍ և Ժ. ՎԱԼԵՆԻՆ, Ընդհ. ներկայացուցիչք։ Աղբիւրներէս Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխաւոր գործակալաւ Գ. ԵԿԱՆՈՅ ԴԵՐ-Դործակալ ի Գահիրէ

### ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵ

ՀԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԿԼՈՒԻ 200,000,000 ՁԵՐՆԵՐ

ԳՐԱՎԱԿԱԼՈՒԹԻՒՆ 3 ԵԳԻՊՏՈՍ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱՀԻՐԷ ԲՈՆ-ՍԱՅԻՏ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵՆ կ'ստանանք ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ։

Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր անանդներու վրայ։

Ձրանայի և օտար երկիրներու վրայ կ'ստայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր։

Կը գանձէ եգիպտոսի և արաւ-սահմանի վրայ թաշուած փոխանակագրեր։

Այսինքն ձեռնած գրամներուն փոխարէն կանխորոշ պայմանաւած մասով մուծակներ կուտայ։

### ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԸՆԿ.

#### ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՕԼՍՈՅ ՄԻՋԵԻ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԵՐՈՎ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԻՈՅ ԳԻՐ

ԵԱԲԱԹԱԿԱՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿԵՆՈՒՄ. — Ամեն շարքաւոր օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բէրէա, Իզմիր, Միտիք եւ Կ. Պօլիս։

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միեւնոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղբիւրանդրիա ամեն Շաբաթ օր, առաւօտեան ժամը 7ին։

ԾԱՆՈԹ. — Ճամբորդները բաւական ժամանակ կ'ունենան շոգենաները Բի-

րէա հանդիպելուն, Աթէնք այցելել։

ՍՈՒՐԻՈՅ ԳԻՐ.

ՄԵԿԵՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բօն-Սայիտ, Եաֆա, Հայֆա, Պէյրութ, Տրիպօլիս, Մէրսին և Իսկէնտէրուն։

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միեւնոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղբիւրանդրիա ամեն Չորեքշաբթի առաւօտեան ժամը 6ին։

Տասնըհինգ օրը անգամ մը՝ երթեկէ կարմիր

Մովու հետեւեալ նաւահանգիստներու մէջ։

ՃԻՏՏԷ, ՍՈՒԱՔԻՆ, ՀՕՏԷՅՏԱ, ԱՏԷՆ

Ճամբորդութեանց և ապրանայ համար դիմել ընկերութեան Աղբիւրանդրիոյ, Բօն-Սայիտի, Սիւէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Գուլթի ամեն մամանդիւղերուն։

1-1902

### ԼԵԻՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

—X—

ՀԱՆԱՅԱՏՈՒՆ ԺԱՄԱՆԱՅԻՆ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԵՆՆԵՐՈՒ

ԵԳԷՐԷ, Մուսի փողոց,

Ս. և Ս. Սիսնաուի վաճառատան դէմը

Ապրանայ զանազանութիւն

Երաշխաւորութիւն

Ամանութիւն

Ճիշտ հաւաքածոյ Ամերիկեան և Ֆրանսական ժողովրդագրերու

Ծանօթ. վարպետ ժամագործ մը յաճախորդներու տրամադրութեան տակ կը գանձուի։

ԱՅՏԵԼԵՑԷՔ ԵՒ ԳՈՀ ՊԻՏԻ ՄՆԱՔ



ԱՐԾԱԹ

ՇԵՏՈՒ

ԲԱՐԻՉ

1900



ԱՐԱՆՑ

ԿԻՆԵՐՈՒ

ԵՒ

ՏՂԱՅՈՅ ՀԱՄԱՐ  
ՀԱՆԴԵՐՁՆԵՐ

ԸՍՏ ՎԵՐՁԻ ՆՈՐԱՅԵՐՈՒԹԵԱՆ

ՉԱՓԱՒԱՐ ԵՒ ՈՐՈՇԵԱՒ, ԳԻՆԵՐ

ԱՂԷՔՍԱՆԴՐԻԱ — ԳԱՀԻՐԷ

### Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն

ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԵՒ ԱՌԵՒՏԲԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԻՈՐ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

Ի յէջ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ, ԲԻՐԷԻ, ԻՋՄԻՐԻ, Կ. ՊՈԼՍՈՅ, և ՕՏԷՍԱՅԻ

Հետեւեալ նոր և առաջնակարգ շոգենաւորով

|                                 |                           |
|---------------------------------|---------------------------|
| ԱՆԲԸՐԷՐ ՆԻՓՕԼԱ. տրղթ. թան. 5500 | 21.10.20 շաբաթը թան. 5500 |
| ԲԷՆ ՕԼԿԱ. " " 5500              | 21.10. " " 5500           |

ԵԱԲԱԹԸ ԱՆԴԱՄ ՄԸ կանոնաւոր մեկնում Աղբիւրանդրիայէն դէպ ի ԲՈՒ ՍԱՅԻՏ, ԵԱՅՈՒ, ՊԷՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐՍԻՆ, ԳԻՐՈՍ, ԻՋՄԻՐ, ՍԵԼԱՆԻԿ, ՏԱՐՍԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ։

ԳԻՄԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ Աղբիւրանդրիա, Թիքոստան փողոց։

### ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խաղիկան Հրամանագրով  
25 Յունվար 1898

Դրամագլուխ Անգլ. ոսկի 1,500,000  
Պահեստի դրամ " " 193,000

Կառավարիչ. Սըր Էլվին Բալմէր.  
Ընդ. կեդրոն ի Գահիրէ. Մամաճիւղեր.

Աղբիւրանդրիա, Մանսուրա, Խաբթում.  
Եգիպտական Աղբիւրանդրիա Դրամատունը կընդունի անանդներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ։

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ թաշուած փոխանակագրեր և կը ստանանք ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ։

### ԴԺՈՒԱՐԱՄԱՐՍՈՒԹԻՒՆ

ԵՒ ՄՈՏԱԽԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Ստամբուլ. հիւանդութիւնը շատ անգամ դժուարամարտութիւն, սրտի խառնուրդ, լուծմունք, պնդութիւն և փսխում առաջ կը բերէ, ինչ որ հիմնապէս բուժելու համար պետք է ամեն ճաշէ վերջ ՐԷԿԿԼԻՍ ՍՏԱԿԻՆԷՐ անուն ազդու դեղէն մէյմէկ քիչ առնել։

ՐԷԿԿԼԻՍ ՍՏԱԿԻՆԷՐԸ սրտի աղբիւրանդրիա շիւստ անհրաժեշտ է։

Կը ծախուի ամեն մեծ և փոքր անոններու մէջ։